



Խ. ԿԱՆԱՅԱՆ

ԻՄ ՀՈՒՇԵՐԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՑ

ՃԵՄԱՐԱՆ

Ուր որ երաս, ինչոր լինի կյանքի մեջ,
Մրառմդ անշինչ դու միշտ պահիր գեր մի բան,
Թե ցուրտ զիշեր չերմացնող շող անշիչ,
Վճառ նազոյդ յարախույս ավող ննարան,
Մի մայր ունիս, նորան նիշիր սիրատենչ
նկ միշտ կրկնիր՝ «Կեցցե՞ նավեր ձեւար եւ»:

Հ. Հովհաննիսյան

Ի՞մ սիրելի ուսուցիչ, հայ ժողովրդից սիրված բանաստեղծ, ես երբեք, երբեք չեմ մոռացել ու չեմ մոռանում քո վերոհիշյալ պատվերը, որ դու կարդացիր 1899 թվականին, Ճեմարանի 25-ամյա հորելլանին՝ հանդիսասրահում: Ոչ միայն ես, այլ նաև յուրաքանչյուր ճեմարանցի, ինչ հայացքների ու դավանանքի էլ լինի, բնավ չի մոռանա մեր Մայր Ճեմարանը, մեր Ալմա Մատերը:

Ճեմարանը իր կարճատկ գոյության ընթացքում (1874—1918) փայլեց մեր խավարտչին երկնակամարի վրա և իր լուսավոր շողերով լույս ու շերմություն տվեց հազարավոր հայ մանուկների հոգուն ու մտքին: Այդ մանուկները, հասուն պատանիներ դարձած, ցրվեցին մեր գյուղերն ու քաղաքները, ուր «հունձք բազումք էին և մշակք սակաւ:

Ինչպես կարող եմ մոռանալ ինձ «իմրախույս տվող հենարան»-ս, ոգի և հույս ներ-

շնչող մեր լուսո տաճարը, քանի որ նրա տված սնունդն է, որ տակավին փնձ կանգուն է պահում, նրա հայրենաշումն ոգին է, որ դեռևս կայտառ է իմ մեջ, և միշտ պատրաստ նվիրաբերելու այն հայ ժողովրդին, նրա ուսումնատեն զավակներին...

Արդ, այժմ, 80-ամյա այս հասակումս, մտքով թոշում եմ զեպի անցյալը, հիշողությանս մեջ պայծառանում են անցած-գնացած իմ քաղցրանուշ, և երբեմն էլ դառնագին դեպքերն ու զեմքերը:

Կրկին քո գիրկն եմ գալիս իմ գորովագութ, պասնող մայր, իմ հոգեսոր ծնող: Համբուլյոր քոնց շենքի քարերին, լայնաբաց դռներին:

* *

Վաղուց, շատ վաղուց արդեն հասունացել էր այն խնգիրը, որ անհրաժեշտ է Հայաստա-

նում, հայ ժողովրդի ծոցում, ունենալ մի բարձրագույն դպրոց, մի ակադեմիա՝ ճեմարան, որտեղ աշխարհի զանազան վայրերում ցրված հայ մանուկները հավաքվեին և մայրենի լեզվով բարձրագույն կրթություն ստանալին, ունենալ մի ճեմարան, որ հայագիտական առարկաները պետք է լինեին ուսուցման հիմքը, և այդ հիմնարկից պետք է դուրս գալին անձնվեր գործիչներ մեր ուսումնածարավ ժողովրդի համար:

Հայաստանում ակադեմիա հիմնելու կարեցրության մասին խոսել ու գրել են գեռևս մեր լուսավորիչները՝ Ս. Նազարյան, Ս. Նալբանդյան, Ս. Շահագիջ և ուրիշները. Այդպիսի լուսում մի ջահ հարկավ պետք է վասկեր ու բոցկլտար հայ ժողովրդի մեջ, հայ հողի վրա ապրող ժողովրդի մեջ և ոչ թե Հայաստանից դուրս՝ գաղթավայրերում:

Հայկական բարձրագույն դպրոցի՝ ճեմարանի հիմնադրումը վերջապես տեղի ունեցավ այն ժամանակի, երբ Լուսավորչի Գահին բազմեց Գնորդ Դ Կաթողիկոսը, որին խոշորագույն հայագիտ Մ. Արեգյանը «Ճեմագործականություն» է հորչործում:

Գնորդ Դ Կաթողիկոսը 1869 թվականի մայիսի 25-ին, իր օծման երկրորդ տարեդարձի ըրը, պատարագից հետո, եկեղեցական թափորփ գալիս է ճեմարանի շենքի հիմնարկությունն օրհնելու: Իր ձեռքով առաջին հիմնարարը դնելիս, ասում է. «Ճգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեջ, Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա՝ մեղա: Խսկ երկրորդ հիմնարարը դնելիս ասում է. «Ճառ Մեսրոպան և ուսումն՝ տան կեանս հայոն հաստատում»:

Մեծ դժվարություններից հետո, ճեմարանի շինությունն ավարտվում է 1874 թվականին: 1874 թվականի սեպտեմբերի 28-ին, կաթողիկոսի անվանակոչության տոնի օրը, Ս. Գնորդ Վորավարի տոնին, կատարվում է դպրոցի բացման հանդեսը, ուխտավորների և ժողոված հանդիսականների բազմության ներկայությամբ: Երկուշարթի առավոտյան, սեպտեմբերի 30-ին, սկսվում են դասերը: 1874 թվականի մայիսի 11-ին, կաթողիկոսը կովկասի փոխարքային հայտնում է ճեմարանի բացման մասին: Կայսեր կողմից հաստատված նոր ծրագրով, ուսման տևողությունը լինելու էր 9 տարի, որից 6 տարին դպրոցական և 3 տարին լսարանական բաժիններով:

Յարական Ռուսաստանի ձուլման բաղադրականության գաղտնի գործողությունները երեմն-երբեմն դառնում էին բացահայտ գրքից, տպ. Վաղարշապատ, 1898 թ.:

Հերթական հայահալած քաղաքականությունը բռնկվեց 1895 թվականին: Ցարական մի հրամանով փակվեցին Հայկական ժողովրդական դպրոցները:

1895 թվականի գարնանային մի առավոտ մենք, իգդիրի ծխական դպրոցի բազմահարյուր սանկիներս, ուրախ-ուրախ թոշկոտում էինք դպրոցի ընդարձակ բակում, խոսում, երգում, պարում էինք և արդեն հոգնած խաղերից, անհամբեր սպասում էինք դպրոցի զանգի հրավերին դպի դասարանները: Սակայն զանգակի ձայնը ուշանում էր... նեռում, ուսուցչանոցում, ինչ որ իրարանցույլ էր. դռան բացվածքից ոստիկաններ էին երկում՝ ուսադիրներով, սրերով:

Հանկարծ հուժկու և զայրագին հնչեց դպրոցի զանգը... Ամբողջ աշակերտությունը հավաքվեց պատշգամբի առաջ: Պատշգամբում կանգնած են մեր ուսուցիչները տիտուր, մթագնած դեմքերով: Նրանք գումարմ են մեզ մեր սիրելի դպրոցի փակումը... Աշակերտները հուզվում են և կոծը պատում է ողջ բակը: Չենք բաժանվում դպրոցից: Սակայն անողոք իրականությունը կատակ չէր անում: Դպրոցի դռները փակվեցին մեր առաջ, Երկար՝ երկար ժամանակ պահպան էր առաջի կամաց-կամաց, երերում բալլերով հեռացանք մեր տները, մեր վշտերին հաղորդակից դարձնելով նաև մեր ծնողներին:

1896 թվականի օգոստոսի վերջերին, ճեմարանի ընդարձակ բակում եռուզեն է: Հավաքած են հարյուրավոր մանուկներ և պատանիներ: Փակված դպրոցների ուսումնածարավ հայ պատանիները ցանկանում են իրենց ուսումը շարունակել ճեմարանում: Յուրաքանչյուրի համար մեծ բախտավորություն էր այդ հիմնարկությունն ընդունվելը: Այդ տարին ճեմարանն իր գիրկն ընդունեց սովորական քանակից շատ ավելի աշակերտներ, բայց և այնպես շատ-շատերը դուրս մնացին:

Ես ընդունվեցի Ա դասարան: Սեպտեմբերի 1-ին սկսվեցին դասերը: Հետզետե վարժվեցի ճեմարանի գիշերօթիկ կյանքին, նրա կարգ ու կանոնին, սովորություններին: Պարսկաստանից, Թուրքիայից, Բուլղարիայից, Ռումինիայից և այլ տեղերից եկած հայ պատանիները ծանոթանում էին միմյանց հետ: Ճեմարանի սաները, հատկապես ավագ դասարանների աշակերտները և լսարանական ուսանողները, ցույց էին տալիս նորեկներին սիրալիր, եղբայրական վերաբերմունք: Է՛լ շեմ խոսում մեր ուսուցիչների մասին, որոնք դասախոսությունները դարձնում էին հրապուրիչ, իրենց բարձր գիտելիքների և դասա-

վանդման դաստիարակչական մեթոդների
շնորհիվ:

Ճեմարանը միշտ էլ ունեցել է բարձր որակի ուսուցչական կազմ: Դեռևս Ճեմարանի հիմնադիրը՝ Գևորգ Դավթովիկոսը մտածոգ վաճ էր Ճեմարան հրավիրելու հայ իրականության մեջ հայտնի գիտնականների, մանկավարժների: Նա նյութական միջոցներ չէր խնայում հրավիրված ուսուցիչներին բարվով վիճակում պահելու Վաղարշապատ գյուղաքաղաքում: Սկզբնական շրջանում, և այնուհետև Ճեմարանն իր հարկի տակ ունեցել է Գաբրիել եպիսկոպոս Արվազյան, Արշակ Նահապետյան (հետագայում վարդապետ), Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյան, Ղազարոս Աղայան, Մկրտիչ Պալյան, Սեդրակ Մանդինյան, Միհնաս Բերբերյան, Լևոն Մանվելյան, Փիլիպոս Վարդանյան, Ստեփան Պալասյան, Ստեփան Մալխասյան, Լեռ և այլ երեսեր դասախոսներ:

ի թ ճեմարանական կյանքի ընթացքում,—
6 տարի դպրոցական բաժնում և 3 տարի
լսարանական,— ես ունեցել եմ անվանի գիտ-
նական-մանկավարժ դասախոսներ, ինչպի-
սիր էին Կարապետ Կոստանյանը (Վերատե-
սուլ), Հովհաննես Հովհաննիսյանը, Ստեփան,
Կանայանը, Մանուկ Արեգյանը, Հրաչյա Ա-
ճառյանը, Հակոբ Մանանդյանը, Սիրական
Տիգրանյանը, Սեթ Հարությունյանը, Գարեգին
Լևոնյանը, Կարապետ Վարդապետ Տեր-
Միրացյանը, Գարեգին Վարդապետ Հովհան-
յանը (Գետագյում Կաթողիկոս Մեծի Տանն
Կիրիկիոս), Կոմիտասը և ուրիշներ:

Յեմարանն ոմեկը նաև վերակացուեր,
որոնք հսկում էին կարգ ու կանոնին և սեր-
տողությունների ժամանակ աշակերտներին
օգնում էին, երբ նրանք դաս պատրաստելիս
որևէ դժվարության էին հանդիպում:

Հարկավ ոչ բոլոր վերակացումներն էին կարողանում աշակերտների հարցումներին պատճենանել:

Աշակերտները հետությամբ կարողանում էին վերահսու լինել նրանցից յուրաքանչյուրի մասկորության ու գիտելիքների համար:

ՃԵՐԱՎԱՐԻ ՎԵՐԱԿԱՑՈՒՅԹ

Գևորգ Ղազարյանն .—Մեր վերակացումներից
մէնիլ Գևորգ Ղազարյանն էր: Նա շատ բարի
մարդ էր, վերին աստիճանի աշխատասեր,
իր գործին նվիրված մի անձնավորություն։
Նա երբ ձեմարան եկավ, համարյա թե հայե-
րեն չգիտեր: Ճեմարանի միջնորդում Ղա-
զարյանը այն աստիճան հմտացավ հայերե-
նին, որ սկսեց գրեթե թարգմանել ոռւսերենից
հայերեն: Սակայն նա մի թուղություն ուներ,

այդ այն էր, որ նա անպատճառ ուզում էր աշակերտների հարցերին պատասխանած լինել, թեկուզ իրեն տրված դժվար հարցերին: Խռամանկ աշակերտները, օգովվելով նրա այդ թուլ կողմից, երբեմն դիտմամբ այնպիսի հարցեր էին տալիս, որ նա դժվարանար պատասխանելու զաղարյանը գրաբար չգիտեր, նոր էր սովորում: Մի անգամ մեր ընկերներից մեկը դիմեց նրան սերտողության ժամանակ, թե «Պարոն Դևորդ, ի՞նչ կնշանակ քոցցես»: Կմկմաց, կմկմաց և ասաց՝ «գոգնոց»: Ասաց և հեռացավ: Մենք փոթկացինք: Եվ այսպիս, մեկ-մեկ կրկնվում էին մենման, արածճիությունները:

Միրտիլ Ղազարյան. — Վերակացուներից Հատկապես հիշատակելու արժանի է Մկրտիչ Ղազարյանը: Սա բարձրահասակ, ազգեցիկ դեմքով, լուրջ, մտախոհ մի մարդ էր: Նա մեզ ավանդում էր Հայաստանի աշխարհագործուն: Նրա դասերը հետաքրքրական էին, քաջ գիտեր թե՛ պատմական՝ հին աշխարհագործունուն և թե՛ նորը: Ղազարյանը շողել էր ամբողջ Հայաստանով մեկ և մեզ նյութը հաղորդում էր իրեք կենդանի վկա: Նա սիրում էր առարկան և նույնը պահանջում մեզնից: Մկրտիլ Ղազարյանն այնպես էր մեզ ուսուցանել մեր աշխարհը, որ առարկան ավարտելուց հետո, քննության ժամանակ պահանջեց ոչ միայն բերանացի պատասխանել անցած նյութը, ամբողջ ծրագիրը, այլ նաև գրավոր: Ի՞նչ էր այդ գրավորը: Մենք պետք է ամբողջ Հայաստանը գծադրեինք, քարտեզ կազմեինք, Քարտեզի մեջ զծագրելու էինք լեռները, գետերը, լճերը, նշելու էինք քաղաքների տեղերը՝ գրելով պատմական և ժամանակակից անունները: Մինչև հիմա ինձ մոտ մնացել են Հայաստանի աշխարհագործության թերթերը, որոնց վրա գծագրված են մեր գտերն ու լեռները՝ իրենց շրաբաշխներով: Հանունք:

Մկրտիշ Ղազարյանը վերջում ձեռնադրվեց քահանա և մեկնեց Պետերբուրգ, այդտեղի հայ գաղութին սպասարկելու համար Մերժությունի ծանր օրերի ժամանակ, 1919—1920 թվականներին, նա օճնում էր ժողովրդին, իրախառուում նրան, հույս ներշնչում լավ ապագայի համար։ Վերջում Ղազարյանը զոհվում է իր հայրենասիրական պարտքը կուտածեկա։

Մարտիրոս Հախնազարյան.— Սա հին ճեմարանավարտ էր, ինչպես նաև Մկրտիչ Ղազարյանը, սակայն Հախնազարյանն իր բնագրությամբ հակադրվում էր Մկրտիչ Ղազարյանին։ Հախնազարյանը զկուիսը կախ, ինքն իր մեջ ամփոփված մի մարդ էր, բոլոր աշակերտների նկատմամբ չէր ոռւապեսովով

հավասար, արդարամիտ վերաբերմունք: Նա ուներ իր հատուկ համակրանքին ենթակա աշակերտներ, ուշադրության կենտրոնում նրանք էին, մյուսներով քիչ էր հետաքրքրություն, այդ պատճառով էլ նա առանձին հարգանք չէր վայելում աշակերտության կողմից: Սակայն պետք է ասեմ, որ նա գիտակ էր, զարգացած, մեր յուրաքանչյուր էր տալիս: Նա ցածր դասարաններում պարապում էր հայոց լեզու:

Քերոր Միրաքյան.— Ճեմարանն ավարտելուց հետո զինվորական ծառայության կանչվեց և սպայի կոչում ստացավ: Նա Ճեմարան հրավիրվեց իրու վերակացու և մարմնամարդության ուսուցիչ: Նրա հերթապահության ժամանակ կարդ ու կանոնը աշակերտների մեջ ավելի բարձր մակարդակի վրա էր: Մեծ ոգեստությամբ էին անցնում նրա մարմնամարդության դասերը: Աշակերտներին շարքերով կանգնեցնում և ուղարկան երգերով քայլել էր սովորեցնում: Ճեմարանի բակից հաճախ դուրս էինք գալիս Վաղարշապատի դաշտերը, երգերի թնդյունների տակ քայլելով անցնում էինք դեպի նգդիր տանող խճուղին:

Հաճախ Քերոր Միրաքյանին ուղղակի կոչում էինք «եղբայր Քերոր» և ոչ թե «պարոն Քերոր», որովհետև քիչ ժամանակ առաջ էր ավարտել ճեմարանը:

Հովսեփ Գրիգորյան.— Սրան ևս աշակեռության մեծամասնությունը «եղբայր Հովսեփ» էր կոչում: Այս մի անձնական կարելի էր կոչում: Այս մի անձնական թվականներից սկսած մինչև վերջ, մինչև ճեմարանի փակվելը՝ 1918—1919 թվականները, անընդհատ մնաց ճեմարանում և իր ամբողջ նվիրվածությամբ ծառայեց նրան: Նա ցածր դասարաններում աշխարհագրություն էր ավանդում, թե՛ իրու դասատու և թե՛ իրու վերակացու նա սիրված էր ճեմարանի ամբողջ ընտանիքի կողմից: Հովսեփը ճեմարանի կենդանի պատմությունն էր: Ճեմարանի վերաբերյալ անցած, մոռացված դեպքերի ու դեմքերի մասին ամեն մի տեղեկություն կարելի էր ստանալ եղբայր կամ պարոն Հովսեփից: Ճեմարանի փակվելուց հետո նա ապրում էր Երևանում, գրադպում էր թարգմանական գործերով:

Հակոբ Արխատակեսյան.— Հիշենք նաև Հակոբին, ճեմարանավարտ այդ վերակացուին, թարգմանասակ, հաղթանակամ, կարգ ու կանոն սիրող համակրելի մի երիտասարդ էր նա, նվիրված իր գործին: Հետաքայում, սովետական շրջանում, նա հայտնվեց Երևանում և գրադպում էր ուսուցչությամբ: Լավ, սրտակից ընկեր էր, իր կոշման բարձրության վրա կանգնած: Ձերմորեն սիրում էր իր հայրենիքն ու նրա մշակությը:

Ճեմարանի վերակացուները աշխատում էին հերթափոխությամբ, ամեն մի հերթին երկու հոգով: Նրանց պարտականության մեջ էր մտնում նաև աշակերտներին եկեղեցի առաջնորդելը, սեղանատուն տանելը, զրուանքի հանելը: Նրանք միևնույն ժամանակ աշակերտների մեջ մեգած թյուրիմացությունների, ընդհարումների դատավորն էին: Ճեմարանի պաշտոնյաների շարքում անհամար էին հարցել նաև Կարապետ Քոչարյանին, որ նույնպես ճեմարանի նախկին սահերից մեկն էր նա վարում էր ճեմարանի վարչության դիվանի գործերը նա մի հմտու և գիտակ դիվանապետ-քարտուղար էր: Համեստ, աշխատասեր, պարտաճանաչ մի անձնակարգություն էր Քոչարյանը: Ճեմարանի թե՛ ուսուցիչների և թե՛ աշակերտների կողմից հարգված մարդ էր նա, որը մնաց նույն պաշտոնում, կարծեմ, մինչև ճեմարանի փակվելը:

Զի կարելի չհիշել Արովյան եղբայր Մեսրոպին: Նա, ավարտելով դպրոցական բաժինը, մնաց ճեմարանում, իրու տնտեսական բաժնի վարիչ: Այս պաշտոնում նա մնաց երկար տարիներ: Նա իր պաշտոնը կատարում էր ամենայն բարեխնականությամբ: Մեծ հոգատարություն էր ցուցահանում աշակերտների նկատմամբ, ամեն կերպ աշխատում էր ըստ կարելվույն աշակերտների սպասարկումը անթերի դարձնել: Աշակերտները շատ էին սիրում այդ աշխատասեր, անաշառ մարդուն:

ՃԵՄԱՐԱՆԻ ԽՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Կարապետ Կոստանյան.— Սա մեր հայ իրականության մեջ հայտնի հայագետ-գիտնականներից է: Ունի երկու տասնյակից ավելի բանասիրական արժեքավոր աշխատություններ: Առաջին անգամ նա՝ հայտնաբերեց մեր միջնադարյան տաղերգուններին և գրական-բանասիրական աշխարհում գրանց շուրջը առաջ բերեց հատուկ հետաքրքրություն: Նրան այնուհետև հետեւեցին շատերը:

Իմ նպատակը չէ կ. Կոստանյանի գրականագիտական գործունեության մասին խոսել: Ես ուզում եմ միայն մի քանի խոսք ասել նրա ճեմարանում ունեցած գործունեության մասին:

Կոստանյանը երկար տարիներ եղել է ճեմարանի ուսուցիչ և վերատեսուչ: Ես, գրականատարար, նրան անմիջապես շեմ աշակերտել: Նրա հոյակապ դասախոսությունների մասին խոսում էին մեր ավագ ընկերները առանձին սքանչացումով: Պատմում էին, որ նա իր արտահագուստի բազում գրպաններում գրած ուներ վենետիկյան հրատարակության մեր մատենագիրները, որոնք, ի պահանջել հար-

կին, հանվում էին գրպաններից և ընթերցվում լսարանում:

Երբ ես ծեմարան ընդունվեցի, տեսուշկամ ավելի շուտ վերատեսուլը (ռեկտորը) Կարապետ Կոստանյանն էր: Նա վերատեսչության էր կոչվել 1893 թվականին, մնացել էու այդ պաշտոնում մինչև 1898 թվականը: Որոշ ժամանակ անցնելուց հետո, նա նորից հրավիրվել է ծեմարան:

Կոստանյանը միջահասակ, արդեն հասուն տարիքի մի անձնավորություն էր: Նա ազգեցիկ գեղք ուներ, քալլում էր զանդաղ ու վեճ: Նրանից պատկառում էին թե՛ ուսուցիչները և թե՛ մանավանդ աշակերտները: Վերջիններս նույնիսկ քաշվում, երկյուղ էին գգում նրանից: Նրա կարգ ու կանոն սիրելը, խստապահանջությունը բոլորիս քաջ հայտնի էր: Նա երեմն-երեմն շրջում էր բակում: Հազվագյուտ գեպերում էր խոսում որևէ աշակերտի հետ և Անկարգություն» նկատելին, նա շտեսնելու էր տալիս: Մեզ թվում էր, թե նա չի հետաքրքրվում մեր կյանքով, անտարբեր է, «բարուրուկրատ»: Սակայն նա հարկ եղած գեղքում կանչում էր իր մոտ որևէ աշակերտի կամ ուսանողի և նրա հետ զրուցում մեղմ, հայրական, խրատական եղանակով: Իրեն հեռու պահող այդ մարդը մեզ բոլորին ճանաշում էր հականե-հանվանե-համար:

Կոստանյանը համար հայրենասեր գործիչ էր: Ամեն միշոց և իր հեղինակությունը գործ էր գնում ծեմարանը իր կոշման բարձրության վրա պահելու համար:

Իր տեսչական շրջանում Կոստանյանը երեմն-երեմն դասեր էր լսում: Դասը սկսվելուց մի երկու րոպե անց ներս էր մտնում և նստում մինչև դասի վերջը:

Կոստանյանը ճարտասան չէր, սակայն խոսում էր գրավիչ, հեղիկ ու հանդարտ զարդացնում էր իր միտքը, հուզվում էր և հուզում: Հիշում եմ նրա ճառը, որ ասաց Գամառ-Քաթիպայի կիսարձանի բացման օրը, կարծեմ 1897 թվականի աշնանը: Նա արտասանեց, իրու բնաբան իր ճառի, Գամառ-Քաթիպայի ժամ կտակը.

«Կյանքիս մեջ մի հատ սին փառք ունեցա, Սուլը էջմիածնում թաղվել ցանկացա, Սիրական իմ ազգ, թե Աստված սիրես, Այս իմ մի հատիկ իղձս կատարեսա:

Բանաստեղծի իղձը շկատարվեց, էջմիածնում շթաղվեց, սակայն նրա կիսանդրին դրվեց ծեմարանի հյուսիսային բակում:

Կոստանյանը, ինչքան որ խստ ու ռանձարդամուտ էր ծեմարանում, նույնքան

մեղմ, սրտակից բարեկամ էր իր նախկին սաների հետ ծեմարանի պարիսպներից դուրս: Պաշտոնից ազատված ժամանակ էլ հանդիպելի սրտագին, բարեկամական վերաբերմունք էր ցուցահանում:

Կարապետ Կոստանյանը 1911 թվականից սկսած մինչև իր մահը կազմական ծեմարանի տեսուչն էր: Նա վախճանվեց Մոսկվայում 1920 թվականին:

Արժե հիշել նաև Կոստանյանի կնոջը՝ Տիրուհի Կոստանյանին, որն իր ամուսնու հավատարիմ ընկերն էր, ինքն էլ էր գրականությամբ զարգում: Ունի շատ թարգմանություններ գերմաներենից հայերեն, մանավանդ՝ մանկական-պատանեկան աշխարհին վերաբերող:

Կարապետ Տերյան.— Մաթեմատիկայի և ֆիզիկայի լավագույն մի ուսուցիչ էր Տերյանը, նա կատարելապես տիրապետում էր իր առարկային, ավանդում էր գեղեցիկ հայերենով, քանզի նա ևս հին ճեմարանավարտներից մեկն էր: Նա աշխատում էր ըստ հնարավորության բոլոր տերմինները կիրառել հայերեն լեզվով: Նրա լավագույն աշակերտներից էր Արշակ Տոնյանը՝ Երևանի պետական համալսարանի քաջահմուս դասախոսը, որ մաթեմատիկան ավանդում էր հետաքրքրական, գրավիչ, անուշ հայերենով: Նա ևս, հետեւըլ Տերյանին, մաթեմատիկայի տերմինները մեծ մասամբ հայերեն էր դարձնում և եղածը հարստացնում էր իր հմտությամբ և նախանձախնդրությամբ: Սակայն Տերյանի պակասությունն այն էր, որ նա խստապահանջ չէր: Դաս շիմացող աշակերտը նրա դասին ներկայանաւում էր մի քանի րոպե ուշ, քանի որ Տերյանն ամրող դասի ընթացքում միայն մեկ հոգու էր հարցնում: Մյուսներին, երեմն, տեղում հարցեր էր տալիս: Մի անգամ, պատմում են, մանկավարժական խորհրդի նիստում քննվում է աշակերտության առաջադիմության հարցը: Տերյանը ֆիզիկայից 6-րդ դասարանում բոլորին նշանակել էր 4 և 5 թվանշան: Կոստանյանը զարմանքով հարցնում է, «Պարո՞ն Տերյան, մի՞թե դասարանում թույլ կամ միշակ աշակերտ չունեք»: Տերյանը, որ ընդհանրապես լրակյաց, շատ սակավախոս մարդ էր, կմկնում է և պատասխան տալ չի կարողանում: Հետեւալ եռամսյակին Տերյանը նույն դասարանի աշակերտներին ֆիզիկայից նշանակում է միայն 2 և 3 գնահատական:

Տերյանի հակատիպն էր ծեմարանի մեկ ուրիշ մաթեմատիկոս՝ Պետրոս Տիգրանյանը: Նա մեզ ավանդում էր ցածր դասարաններում: Խստապահանջ մի անձնավորություն էր, գնահատականի մեջ՝ ժամատ: Մեր ընկերներից մեկը՝ Հարությունյան Արմենակը, թվարա-

նությունից շատ թույլ էր, շարունակ 2 էր ստանում, սակայն շատ աշխատասեր էր: Մի անգամ Հարությունյանն ասաց. «Պարոն Տիգրանյան, ախր շատ եմ աշխատում...»: Պատասխանեց լուսամուտից դուրս նայելով. «Ահա տե՛ս, Զատիկ պապիկն էլ (Ճեմարանի տնինիկական աշխատող, պարուղպան) շատ է աշխատում, նրան էլ բավարար նշանակե՞մ: Շատ աշխատելը բավական չէ»:

Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյան.— Խրիմյան Հայրիկի կաթողիկոսության ժամանակաշրջանում էջմիածնում Կարապետ վարդապետի գլխավորությամբ գործում էին մի խումբ երիտասարդ վարդապետներ, որոնք ճեմարանն ավարտելոց հետո իրենց գիտելիքները ճնշեցրել էին Ռուսաստանում և արտասահմանում: Նրանք իրենց ձեռքն էին վերցրել էջմիածնի ուսումնական-գիտական գործը. նրանք ըստ մեծի մասին աշխատում էին ճեմարանում:

Կարապետ վարդապետը մի քանի տարի ճեմարանի վերատեսուլ եւավ և միւսովն ժամանակ զեկուվարում էր աստվածարանության, հայոց եկեղեցական պատմության ամբողոքները: Նա երկար ժամանակ խմբագրում էր «Արարատ» ամսագիրը: Նրա խմբագրության ժամանակ «Արարատ»-ը վերին աստիճանի հետաքրքրական ամսագիր էր: Ամսագրին աշխատակցում էին Գարեգին վարդապետ Հովսեփյանը, Ստեփան Կանայանը, Մանուկ Աբեղյանը, Հովհաննես Հովհաննիսյանը և ուրիշներ:

Կարապետ վարդապետը, իբրև դասախոս և իբրև հոգատար մարդ, շատ էր սիրված աշակերտության կողմից: Նրա դասերը հետաքրքրական էին: Նա մեր մեջ հարուցանում էր սեր գեպի մեր անցյալի մշակոյթի արժեքները: Նա հաճախ մեզ աշխատեցանում էր մատենադարան-ճեռագրատանը, որպեսզի մենք սովորենք ուսումնասիրել մեր պապերի թողած հարուստ ժառանգությունը:

Կարապետ վարդապետը, հետաքայում եղիսկոպոս, եղել է Ատրպատականի առաջնորդ, ապա Բաքվի թեմի առաջնորդ: Բաքվում վիրահատության ենթարկվելով, վախճանվում է անժամանակ: Իր գիտական մտքի ծաղկման հասակում նա դադարում է գործելուց ընդմիշտ: Նրա մահը խոր վիշտ առաջացրեց հայ մտավորականների շրջանում, մանավանդ նրա բազմաթիվ աշակերտների մեջ:

Կարապետ եպիսկոպոսը, իր աշակերտների մեջ գեպի մեր հուշարձանները սեր զարթեցնելու նպատակով, հաճախ կազմակերպում էր էքսկուրսիաներ, իր սաներին շուրջն առած՝ ոտքով շրջում էր մեր հայրենիքի նվիրական վայրերը:

Կարապետ վարդապետը խոր հայրենասիրությամբ էր համակված: Հայ եկեղեցական կալվածների հափշտակությունը մեծ հուզում. ու ցասում էր առաջ բերել հայության մեջ: Յարական Ռուսաստանի հայահալածքարականությունը խաղաղություն սիրող և համբերատար հայ ժողովրդին ուղարկ էր հանել: Նա իր իրավունքները պաշտպանելու համար պատրաստ էր անձնազության, Տեր-Մկրտչյանը կազմակերպել էր, գաղտնի, ինքնապաշտպանության կոմիտե: Տպվում էին թուուցիներ և տարածվում հայ ժողովրդի բոլոր խավերում: Այդ թուուցիների մեջ գրված կոչերը խրախույս էին կարդում հայերին, որ նրանք շընկնվեն, բողոքի հուժկուալիքը բարձրացնեն՝ շխնայելով իրենց կյանքն անգամ իրենց սրբազն իրավունքների պաշտպանության համար: Ահա՝ Կարապետ եպիսկոպոսը, մեր ուսուցիչը, նաև այդպիսի գործիչ էր:

Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ (1905), Կարապետ եպիսկոպոսը, սպիտակ դրոշը ձեռքին, կառոք նստած շրջում էր երեանի փողոցներով, անցնում էր թուրքական թաղամասները և բարողում հաշտություն ու խաղաղություն:

Վերջին անգամ Կարապետ եպիսկոպոսին հանդիպեցի Թիֆլիսում, Հովհանյան դպրոցի ուսուցիչ Միսաք Խոստիկյանի տանը: Մեր ուսուցիչը զրուցի ընթացքում հայտնեց այն միտքը, որ մտադիր է շուտով կազմակերպելու «Ճեմարանական ընկերություն», որին պետք է անդամակցին բոլոր ճեմարանավարանները և առհասարակ բոլոր նրանք, որոնք սովորել էին Ճեմարանում: Սակայն դժբախտաբար մահը, անժամանակ մահը շուտ վրա հասավ և նա չհասավ իր նպատակին, ընկերությունը չկազմակերպվեց:

Գարեգին վարդապետ Հովսեփյան.— Փոքրահասակ, հիվանդագին կազմվածքով, սակայն ձկուն, արագաքայլ մի անձնավորություն էր Գարեգին հայր սուլը: Նա երևելի պերճախոս, ոգևորությամբ լի մի դասախոս էր: Նա ավանդում էր ընդհանուր եկեղեցական պատմություն, ուսումն Ս. Գրոց: Գարեգին վարդապետը վերին աստիճանի բարեխիղճ, պարտաճանաչ, իր հայրենիքն ու նրա մշակույթը զերմորեն սիրող մարդ էր: Նրա դասերին չէր կարելի չկենարունանալ:

Մի անգամ, դասի ժամանակ, երբ խոսում էր Պողոս առաքյալի մասին, ոգևորվեց. նկարագրում էր առաքյալի արտաքինը, ծիչուայնպես, ինչպես ինքն էր. իսկ նրա զերմեռանդ, նվիրված գործունեությունը ճիշտ այնպես, ինչպես ինքն էր գործում: Խոսում էր Բառնաբաս առաքյալի մասին, նրան էլ նկարագրում էր իր ընկեր Կարապետ վարդապե-

տի նմանությամբ: Մենք, լսարանցիներս, արդեն Գարեգին վարդապետին մեր շրջանում կոչում էինք՝ Պողոս առաքյալ, իսկ Կարապետ վարդապետին՝ Բառեաբաս:

Գարեգին վարդապետը եղել է նաև ծեմարանի վերատեսուչ:

Գարեգին վարդապետը, հետագայում եպիսկոպոս, ապա Կաթողիկոս Տանն Կիլիկիոս, հայտնի է որպես մեծ գիտնական: Նա ունի բազմաթիվ տպված և անտիպ հոյակապ հայգիտական-բանասիրական աշխատություններ: Նրան իրավամբ կոչում են մտքի տիտան, հայ մանրանկարչության ուսումնասիրության հիմնադիր:

1952 թվականի հունիսի 21-ին, 85 տարեկան հասակում, Անթիլիասում Գարեգին Կաթողիկոսը կնքեց իր մանկանացուն:

Հովհաննես Հովհաննիսյանն—ծեմարանի աշակերտության կողմից հարգված ու սիրված ուսուցիչը էր Հ. Հովհաննիսյանը: Միջահասակ, գրավիշ տեսքով, ժպիտը գեմքին մի մարդ էր նա: Հստ ամենայնի բարձր կովուրայի տեր էր, կիրթ էր և բազմակողմանի զարգացած: Նրա դասախոսությունները լսում էինք հափշտակությամբ, խոսում էր հեզիկու հանդարտ, բաղրացնչուն, սահուն, նա ավանդում էր ընդհանուր գրականություն և ուսուց գրականություն: Ուսուց գրականությունն անցնում էր ուսուց լեզվով: Ծեմարանում ուսուց գրականությունը, ուսուց պատմությունը, Ուսուսատանի աշխարհագրությունն անցնում էինք ուսերեն լեզվով:

Այդ առարկաների ուսուերեն լեզվով ավանդելը նպաստում էր մեր ուսերենի կարողության ուժեղացմանը, ուսուց լեզվի յուրացմանը: Այս հանգամանքը բնակվ երրեք բացասարար չէր անդրադառնում հայերեն լեզվի, առանաբար հայերենագիտության գործի վրա, քանի որ այն դրված էր ամուր և անհողող հիմքի վրա:

Ընդհանուր գրականության առարկան անցնելիս, Հովհաննիսյանը հատկապես կանգ էր առնում Շեքսպիրի վրա, իսկ ուսուց գրականությունից՝ Գոգոլի: Նրանց ստեղծագործությունները վեր էր լուծում առանձին ոգևորությամբ: Գոգոլի «Ռևիզորը» («Վերաբննիշը») այնքան մանրամասնությամբ էինք անցնում և թարգմանում հայերենի, որ համարյա շատ կտորներ անդիր գիտեինք երկու լեզուներով էի: Հովհաննիսյանի ղեկավարությամբ «Ռևիզորը» ներկայացրինք եղմիածնի բեմի վրա, ուսուց լեզվով: Հետագայում, մեր ընկերներից մեկը՝ օրդուցի Լյուդվիկ Տառյանը, ճեմարանական դասերից օգտվելով, «Ռևիզորը» թարգմանեց հայերեն: Գրքի շապկի վրա գրվել էր թարգմանիլ և. Տ. Այդ հանգամանքը շփոթության մեջ էր գցել ա-

կաղեմիկոս և Հովհաննիսյանին և սա և. Տ. Տ. վերագրել էր կեռն Տիգրանյանին:

Հատուկ ոգևորությամբ ու հաճույքով նա դասախոսում էր Հոմերոսի մասին, նրա «Իլիական»-ի, «Ոդիսական»-ի մասին: Մենք հաճախ դիմում էինք նրան, որ ձեռնարկի «Իլիական»-ի և «Ոդիսական»-ի աշխարհաբար թարգմանության, քանի որ նա միակ անձն էր, որ կկարողանար գուխ բերել այդ դժվարին, սակայն շնորհակալ գործը: Զէ՞ որ նա և բանաստեղծ էր, և՝ հունաբենի մեջ քաջազմությունը, և՝ միաժամանակ հայոց լեզվին շահագրար տիրապետող: Նա մեզ միշտ պատասխանում էր. «Թողի ինձ ապահովելին տարեկան 2 000 ուրբագիւ, որ կարողանամ միերկու տարվա ընթացքում այդ թարգմանական տարվա ընթացքում այդ համար քաղցր աշխադժվարին, բայց ինձ համար քաղցր աշխատանքը կարող էր լինելոց: Սակայն թէ՛ մեր և թէ՛ մանավանդ Հովհաննիսյանի այդ ցանկությունը մնաց լոկ ցանկություն:

Դասավանդման ժամանակ նա հաճախ կարդում էր կտորներ Հոմերոսից, հույն գրականությունից արած իր թարգմանություններից:

Հովհաննիսյանը սրտանց կապվել էր ծեմարանին, ապրում էր նրա կյանքով: Նա հաճախ էր շփում աշակերտության հետ:

Հովհաննիսյանը, ինչպես ասացի վերևում, քաշ գիտեր հայերեն՝ գրաբարը և ժամանակակից հայոց լեզուն, տիրապետում էր բարբառներին, ուսերենին, գիտեր մի քանի եկուուպական լեզուներ և հին հունաբեն: Նա նախանձախնդիր էր ուղղախնդության նկատմամբ, հայերենի արտահայտությունների, հայի հոգուն հարազատ դարձվածքների նկատմամբ: Ուսերենի որևէ ասացվածք, դարձվածք, առած թարգմանելին, նա գտնում էր նրանց համապատասխան հայերեն ձևերը և արտահայտությունները Շատ անդամ վիճակ ներ ճեմարանցիներու որևէ լեզվական խնդրով նրան էինք դիմում: Մեծանուն բանաստեղծ Ավետիք Խաչակրյանը, Հովհաննիսյանի մասին գրած իր հիշողությունների մեջ, հիշում է մի դեպք, թէ ի՞նչպես աշակերտները դիմեն Հովհաննիսյանին, որ նա որոշի, թէ ո՞ւ ասածն է ճիշտ վիճենի դարձվածքի արտահայտության նկատմամբ: Նա երկար մտաւալու հետո, դեռ չի պատասխանում, երբ տեսնում է ծեմարանի բակով անցնող մի գուղացու, կանչել է տալիս նրան և խոսեցնելու միջոցով գտնում է ճիշտ արտահայտությունը դյուլացու բերանում:

Հսահակյանի այդ հաղորդումը միանգամայն համապատասխանում է իրականության, քանի որ այդ դեպքը պատահել է իր աշակերտության օրոք:

Հովհաննիսյանը մշտապես օգնում էր կաթողիկոսի դիվանին, Սինոդին՝ պաշտոնական գրություններ կազմելու մեջ:

Վաղարշապատում ապրում էր Հայրենական տանը: Բազմանդամ ընտանիքով ծանրաբռնված էր նա: Նրա տան դռները միշտ բաց էին հյուրերի համար: Դժվար տարիներ եկան: Հովհաննիսյանը ստիպված եղավ փոխադրվել Թաքու և այնտեղ պաշտոնավարել իրեւ ժողովրդական դպրոցների տեսուչ:

1913 թվականին կատարվեց 2. Հովհաննիսյանի գործունեության 30-ամյակը, որին շերմ մասնակցություն հանդես բերին նրա ընկերներն ու աշակերտները:

Տարիներ անցան: Հայաստանը դարձավ սովորական: Հովհաննիսյանն ամրողովին նվիրվեց վերածնված հայրենիքի շինարարության գործին, նա իր դիմելիքները, իր բազմակողմանի հմտությունը ի սպաս դրեց մեր մշակույթի զարգացման գործին:

Այստեղ ուզում եմ հիշել մի դեպք: 1925—1926 թև 1926—1927 թվականին, գարնանը, երրես բանվորական ֆակուլտետից դուրս էի զալիս դասախոսություններս վերջացրած. հենց դռան մուտքի մոտ հանդիպեցի սիրելի ուսուցչին, որ դանդաղ բայց երով իշնում էր Արովյան փողոցն ի վայր:

«Թարեկ վարժապետ», — ասացի ես: Առավ բարես, թես մտած շարունակեց իր ընթացքը: Սկսեցինք զրուցել: Ես հարցրի նրան, «Ասա՞՛, վարժապետ, դու ո՞ր դասակարգի ներկայացուցիչն ես, ո՞ր դասակարգի հղձերն ես արտահայտում: Ես հենց նոր դասախոսեցի հայոց գրականությունից, «Հ. Հովհաննիսյանի ստեղծագործությունները» թեմայի շուրջը: Ես քեզ դուրս բերի որպես մանր բուրժուազիայի զրոյ.. Արդյոք ճիշտ չե՞մ վարվել:

Վարժապետ կանգ առավ, նայեց երեսին և ասաց. «Աղա՞», ես գրել եմ, ինչ որ զգացել եմ, ես շա՞տ դիտեմ, թե ո՞ր դասակարգի զրոյ եմ ես...»:

Այդ ժամանակներում դպրոցներում իշխում էր «Գուեհիկ սոցիոլոգիզմ»: Ստեղծագործության գեղարվեստական վերլուծությունը գտնվում էր երկրորդ գծի վրա, կամ էլ բոլորովին մոռացվում էր:

Հ. Հովհաննիսյանը մեր նոր բանաստեղծության եռյակի—Հ. Հովհաննիսյան, Հ. Թումանյան, Ա. Խաչակյան—պարագուիմ էր: Նա խոշոր տաղանդ էր, խորիմաստ բանաստեղծ:

Ստեփան Կանեայան.— Երկար տարիներ Ստեփան Կանայանը, իմ ավագ եղբայրը, եղել է Ճեմարանի ուսուցիչ: Նա Ճեմարանի (լսա-

² Հովհաննիսյանը սիրում էր մտերիմների հետ խոսել երբեմն-երբեմն իրենց՝ վաղարշապատցիների բարբառով:

րանական բաժնի) անդրանիկ շրջանավարտներից մեկն էր (1883): Գերմանիայում նաշարունակում է ուսանել: Վերադառնում է Հայրենիք, սկզբում պաշտոնավարում է Ներսիսյան դպրոցում, ապա Շուշիի թեմական դպրոցում՝ իրեւ տեսչի պաշտոնակատար: Թիֆլիսում աշխատակցում է «Արծագանք»-ին, իրեւ խմբագրության անդամ: Ապա գնում է Էջմիածին և մանում Ճեմարան իրեւ ուսուցիչ, մինչև 1914 թվականը: Այսուհետև կրկն գնում է Թիֆլիս և մնում մինչև 1921 թվականը: 1921 թվականին ընտանիքով փոխադրվում է Երևան: Վախճանվում է 1937 թվականին սրտի կաթվածից:

Կանայանը բարձրահասակ, հաղթանակ, բարի դեմքով, գեղադեմ մի մարդ էր: Նա Ճեմարանի աշակերտների կողմից շատ սիրված և հարդարված ոսուցիչներից էր. Նրան շատ սիրում էին հատկապես իր բարի, չերմ, սրտակից վերաբերմունքի շնորհիվ: Կանայանն իր գործին նվիրված, շիտակ գործիլ էր: Ավանդում էր հայոց պատմություն, ընդհանուր պատմություն և գերմաներենն: Նրա աշակերտներն ազատ կարդում և թարգմանում էին գերմաներենից հայերեն: Օրինակ, Հարություն Պետրոսյանը (Հետազայում համալսարանի գրաբարի դասախոս) գերմաներենից թարգմանել էր «Հերման և Գորոթեա» պոեմը, շափածո, ընտիր հայերենով: Թարգմանությունը նվիրել էր իր ուսուցիչ Կանայանին:

Ստեփան Կանայանը տասնյակ տարիներ հայկական բարձրագույն դպրոցի՝ Ճեմարանի անխոնց աշխատող, սերունդներ կրթող դասախոսներից է: Նա ծանոթ է իր բանասիրական-գիտական-ֆոլկորային աշխատանքներով: Հայտնի են իր «Ճողանց տուն», «Անհայտ գավառներ» հին Հայաստանում», «Մերձավոր ամուսնությունը Հայաստանում», «Քաջանց տուն»³ և այլ բանասիրական-գիտական աշխատանքները:

Մանուկ Արելյան.— Արելյանը սովորել է Ճեմարանում, որն ավարտելուց հետո, անմիջապես նշանակվում է Ճեմարանի վեշտացու, ապա մի քանի տարիներ մի շաբթ տեղերում ուսուցչություն անելուց հետո, գնում է Գերմանիա իր ուսումը կատարելագործելու դրական-բանասիրական գիտության ասպարեզում:

Արտասահմանից վերադառնում է Հայրենիք, հրավիրվում է Ճեմարան՝ ավանդելու հայոց լեզու և հայ գրականություն:

³ «Քաջանց տուն» խորագրված երկար տարիների ըրտնաշան մեծածավալ աշխատությունը տակավին մնացել է անտիպ: Գտնվում է ակադեմիայի գրականության ինստիտուտի տրամադրության տակ և պահպանվում է գրական թանգարանում:

Արեղյանը ճեմարան գալով, մեծ հեղաշրջում առաջ բերեց հայ լեզվի ավանդման գործում: Նա մեծ զարկ տվեց աշխարհաբարի ուսուցման գործին: Աշխարհաբարի դասավանդումը, որ տեղի էր ունենում միմիայն ստորին դասարաններում, նա հասցրեց մինչև դպրոցական բաժնի վերջին դասարանը: Աշակերտները հայոց լեզուն սովորում էին դասական հեղինակների ստեղծագործությունների միջոցով: Օրինակ, Դասարանում մեր հայոց լեզվի դասագիրքը «Սամվել»-ն էր: Հայերենը դարձավ շատ սիրելի ու հետաքրքրական առարկա: Քերականությունը՝ շաղկապվում էր ընթերցանության նյութի հետ: Գրում էինք աշխարհաբար շարադրություններ: Գրաբար գրելիս նեղվում էինք, մեր գրելու ընդունակությունների համար ազատ ասպարեզ ստեղծեց աշխարհաբարը: Գրաբարի և աշխարհաբարի քերականական, ոճային, բառակազմական նյութերը անցնում էինք միասնաբար, իրար հետ համեմատելու միջոցով:

Մանուկ Արեղյանը դասերի ընթերցում երբեմն մեզ հետ խոսում էր, հարցեր էր տաիս գրաբար, նույնիսկ այդ լեզվով կատակում էր:

Մեր դասարանցի Վարդան Բաղդասարյանը շատ էր սիրում իր հոր մասին խոսել, նրա առակներից, ասույթներից պատմել: Արեղյանը այդ գիտեր: Մի օր, գրաբարի ժամին, դարձավ Վարդանին և ասաց. «Վարդան, պատմեա տեսցուք, զի՞նչ գիտէ հայրն քո առակախօս: Վարդանը փորձեց գրաբարով մի բան հորինելով պատմանել, սակայն ընդհանուր ծիծաղի տակ շփոթվեց ու լոցք:

Արեղյանը մեր դաստիարակն էր 2—3 տարի շարունակ: Մի անգամ Դ դասարանում, ապրիլի 1-ին (խաբելու օր), որոշեցինք մտնել նստարանների տակ և լուսիթյան մեջ սպասել Արեղյանի դալուն: Զանգն արդեն տվել էին: Արեղյանը ըստ իր սովորության գույքը կախ, թմբթմբացնելով քայլեց դեպի բեմը և դարձավ դասարանին, սակայն դասարանը «դատարկ» տևենելով, իսկույն իշավ պատվանդանից և քայլերն ուղղեց գեպի դուրս: Հենց այդ ժամանակ մեր ընկերներից՝ Արաբկիրցի երվանդ Քյոսեյանը գլուխը հանեց նստարանի սակից, Արեղյանը նկատեց, կանգ առավ և սկսեց գոռգոռալ: Ամենքս էլ բարձրացանք նստարանների տակից և նստեցինք տեղներս, սակայն Արեղյանը բարկացել էր, շտապ դուրս գնաց, հանդիմանական ու խրատական խոսքերի տարափ թափելով մեր գլխին:

⁴ Այդ Վարդան Բաղդասարյանը, որ ընկերասեր մի պատանի էր, սովետական շրջանում դարձավ գերազունդ դատարանի նախագահ, և մի քանի տարի մնաց այդ պաշտոնում:

Երվանդ Քյոսեյանը մի խորիմաստ, լուրջ, լավ պարապող պատանի էր: Նա երազույթը միջանագիտությամբ զինված, Ճեմաւանն ավարտելուց հետո կվերադառնա իր ծննդավայրը և կնվիրվի հայ մանուկների կրթական-դաստիարակչական մեծ գործին:

Քյոսեյանն իրու արևմտահայ կանոնավորացի հաճախում էր օսմաներենի դասերին, նա օսմաններենի դասախոսությամբ շրաշյա Ամառյանի լավագույն աշակերտն էր: Օսմաններենից միշտ բարձր գնահատական էր ստանում: Մենք նրա մասին ոտանավոր էինք հորինել: Այդ ոտանավորից երկու տող եմ հիշում միայն.

«Օսմաններեն քերական,

Գրեց երվանդ Քյոսեյան...»:

Ճեմարանի Դ դասարանում, իմ խմբագրությամբ, ինքնուրույն կերպով, առանց դաստիարակ Մ. Արեղյանի գիտության, գրատարակում էինք «Արշալույս» ամսագիրը: Իմ եղրայր Արդվարդ Կանայանը սովորում էր Լազարյան ճեմարանում, այդտեղից ինձ շարունակ նամակներ էր գրում: Նամակներից մեկում նա գրել էր, թե Մոսկվայում սկսվել են հեղափոխական, ուսանողական շարժումներ: Այդ հաղորդումը գրի առանք մեր թերթում: Արեղյանն իմացավ, հավաքեց բոլոր համարները, կարդաց հաղորդումը և սաստիկ բարկացաց, հատկապես ինձ վրա: «Ի՞նչ է, ուկում ես բոլորին վտանգի՞ ենթարկել, Ճեմարանը փակել տալ...»:

Մեր թերթը դադարեց լուս տեսնելուց: Հետեւ կամարաններում, արդեն նույնպես թերթեր ունենիք, սակայն այս անգամ արդեն դաստիարակի հսկողությամբ: Արեղյանը, հարկավ, այլ կերպ չէր կարող վարվել, քանի որ ցարական կառավարության հայահալած քաղաքականությունը — մեր մշակութային հիմնարկների փակումը, Ճեմարանը վերացնելու պարզակներ գտնելը — ստիպում էին նրան զգուշություն բանեցնել:

Մի անգամ, Դ դասարանում, գրաբարի դասին, կարդում և թարգմանում էինք Խորենացուց մի հատված: Թարգմանող աշակերտը դժվարացավ ճիշտ թարգմանել, դասընկերների օգնությունը զուր անցավ: Արեղյանն ինքն ևս տատանվեց և անմիջապես վրա բերեց:

— Տղանե՛ր, հիմա զանգը կտան, դասամիջոցին կդիմեմ Սեթին. նա մեզ կօգնի:

Արեղյանի այդ խոսքը շզարմացրեց մեզ, ընդհակառակը, նրա վարկը մեր աշքում ավելի բարձրացավ:

Արեղյանը համոզված հայրենասեր էր, ուներ աղքային հպարտություն: Մեր յուրաքանչյուր հաջողությունները նրան հրճվանք էին պատճառում, անհաջողությունները՝ թափիծ:

Արեղյանն իր քերականության ձեռնարկները, հատկապես գլուխ-գործոց «Շարաջյուղություն»-ը, պատրաստում էր իր դասավանդության աշխատանքների ընթացքում:

Եատ հետաքրքրական էին անցնում հայ գրականության սեմինարները լսարաններում: Ուսանողները ելույթների էին ունենում, ոեֆերատներ գրում, ընդդիմախոսում էին բանավոր և գրավոր: Վերջում ամփոփում էր կարդում դասախոսուր:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու ժամանակաշրջանում, Արեղյանը շատ խոր աշխատանքներ կատարեց մեր մշակութի զարգացման համար, թե՛ իրեւ համայստարանի դասախոս և թե՛ իրեւ ակադեմիկոս-Հայագետ գիտնական: Նրա կատարած գործը վիթխարի է: Խղուր չէ, որ նրա անոնով է կոչվում Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը:

Ո՞վ էր Սեր Հարությունյանը.— Սա նույնպես ծեմարանի գրաբարի դասախոս էր: Նա շատ հմտություն էր գրաբարի գիտության մեջ: Ծեմարանի հին շրջանավարտներից էր: Նա ամբողջովին նվիրված էր իր առարկային, խիստ պահանջկոտ էր: Նրա դասերից չէր կարելի խուսափել: Ս. Հարությունյանը Մ. Արեղյանի հետ կաղմել է Մովսես Խորենացու հայոց պատմության գրքի տեքստը բազում ձեռքբերի համեմատությամբ: Դա մի խոշոր բանասիրական հայագիտական գործ է, շնորհակալության արժանի: Սեթ Հարությունյանը ըստ արտաքինի լուրջ էր, խստադիմ, սակայն օժտված էր երգիծական շնորհով: Նա երգիծական հոգվածներ, ֆելիքտոններ էր գրում «Նոր գար»-ում «Գլխավոր» կեղծանունով:

Սեթ Հարությունյանը, ծեմարանն ավարտելուց անմիջապես հետո, հրավիրվում է ինքնիրի հայոց ժիական դպրոց որպես ավագ ուսուցչի: Նա հետաքրքրական դեպքեր էու պատմում իր այդ ժամանակաշրջանի ուսուցչական կյանքից: «Մի անգամ,— ասում էր նա, — ուզեցի լսել կենդանաբանության ուսուցչի դասը: Դեռ դասարան չմտած, դռան ետևից լսեցի ուսուցչի ձայնը. «Տղանե՛ր, կատուն ունի շորս ոտք. կրկնեցե՛ք», Ամբողջ դասարանը միաբերան բղավում էր, «Կատուն ունի շո՛րս ոտք:» «Տղանե՛ր, կատուն ունի մի պոշ». խումբը՝ «Կատուն ունի մի պոշ»: Եվ այս և այլ դասաւումներից, մեր սիրելի գրաբարագետ ուսուցիչը պատմում էր հատուկ հումորով զանազան դեպքեր: Նրա սաները միշտ երախտագիտությամբ էին հիշում նրա հմտորեն վարած դասերը:

Սեղրակ Մանդինյանը.— Ահա՝ մի պատկառելի անձնավորություն, որ օժտված էր մարդասիրությամբ, դեպի իր սաներն ունեցած

սիրալիր ու բարյացակամ վերաբերմունքով: Մեր իրականության մեջ հայտնի գիտնական մանկավարժն էր նա, որ շարունակ գրավոր և բանավոր քարոզում էր այն գաղափարը, թե գիտությունը լավ յուրացնել կարելի է միայն մայրենի լեզվի միջոցով. դաստիարակության հիմքում պետք է զնել մայրենի լեզուն:

Մանդինյանը ծեմարանում պաշտոնավարել է երկու նվագով, նախ 1880—1890-ական թվականներին, ապա ընդմիջում, հետո նորից հրավիրվում է 1896 թվականին: Երկու նվագումն էլ բախտ եմ ունեցել նրան աշակերտելու: Նրա պաշտոնավարության առաջին շրջանում սովորում էի ծեմարանի վարժուցում, որտեղ դասավանդում էին ծեմարանի լսարանցիները Մանդինյանի ղեկավարությամբ: Ես ապրում էի ծեմարանի դասախոս եղբարությունը՝ Ստեփանի մոտ:

Մանդինյանի երկրորդ պաշտոնավարության ժամանակաշրջանում, 1896—1897 թվականներին, ես արդեն ծեմարանի աշակերտ էի: Նա դարձալ մանկավարժական գիտությունների դասախոս էր և ղեկավարում էր մանկավարժական պրակտիկան: Ծեմարանի լսարանցիները՝ Ասլան Շահնազարյան, Եսայի սարկավագ (Հետագայում Զավեն եպիսկոպոսու), Պողոս սարկավագ Զուքարյան, Կոստանդին սարկավագ և ուրիշներ, մեզ հետ պարապում էին Մանդինյանի գլխավորությամբ: Հատ հետաքրքրական էին անցնում դասերը:

Ուսանողները պատմում էին Մանդինյանը դասին տեղի ունեցած մի դիպվածի մասին:

Դաս է պատասխանում ուսանող Զուքարիկյանը: Մանդինյանը լուր, համբերությամբ լուրից մինչև վերջ, ապա ասում:

— Լա՛վ, Զուքարիկյան, ասածներդ ապացուցելու, հաստատելու համար մի օրինակ բե՛ր:

— Հազար ու մի օրինակ կարելի է բերել, պր. Մանդինյան:

— Հազարը քեզ մնա, Զուքարիկյան, մի օրինակ:

— Հազարը օրինակ կարելի է բերել, կրկնում է Զուքարիկյանը և երեքնում:

Եվ այսպիսով Զուքարիկյանը ո՛չ մի օրինակ չի կարողանում բերել:

Հետագայում, վիճաբանությունների ընթացքում, երբ մեկը դժվարանում էր իր առաջարկած խնդիրը պարզաբանել, ապացուցանել, հակառակորդ ընկեր ուսանողը ասում էր նրան. «Զուքարիկյան, մի օրինակ»:

Այդ արտահայտությունը երկա՛ր, երկա՛ր տարիներ կիրառվում էր ծեմարանական ուսանողության շրջանում:

Մանդինյանը տառապում էր գեմքի մաշկի հիվանդությամբ: Նա ծեմարանից գնաց արտասահման՝ բուժման, Սակայն նա վերջնա-

կանապես շառողջացավ. երկար տարիներ մնաց նա հիվանդ վիճակում և այլևս տանից դուրս չէր գալիս:

1910 թվականից ես ապրում էի թիֆլիսում, համախ լինում էի Մանդինյանի մոտ և օգտվում նրա բարի խորհություններից: Նա շարունակ հետևում էր մեր կուտուրական կյանքին, մամուլին, հասարակական գործերին:

Մանդինյանն ունի բազում գիտա-մանկավարժական աշխատություններ, դասագրեր, հոդվածներ, որոնց թիվը շուրջ 300 է: Ուշագրավ են նրա կազմած դասագրերը.

ա. «Ընտանեկան աշխարհ» (1-ին տարի):

բ. «Եղագային դպրագմական աշխարհ» (2-րդ տարի, որի նյութը Սասունցի Դավիթն է կամ Մհերի դուռը):

գ. «Նահապետական և հայրենի աշխարհ» (3-րդ տարի):

Մանդինյանը այն կարծիքի էր, որ հայ դպրոցների համար պետք է կազմել ուսուց լեզուն սովորեցնելու համար առանձնահատուկ դասագիրք՝ համապատասխան հայ մանկան, պատանու մտածողության, հոգերանության և նա կազմեց «Հաշալիանա պատուական հայության 1-ա և 2-րդ համագիրքը»:

Մանդինյանն իր մանկավարժական հայացքները պաշտպանում էր կրթությամբ: Նա երկար ժամանակ բանակովի մեջ էր զ. Աղայանի հետ: Աղայանը կողմնակից էր հնական մեթոդին, իսկ Մանդինյանը՝ օրգանական: Բացի այդ մեթոդական բանավեճերից, նրանք պայքարում էին միմյանց դեմ միևնույն կրթությամբ և ուղղագրության հարցերում: Աղայանն, օրինակ, կրավորական վ-ի փոխարքն առաջարկում էր և իսկ Մանդինյանը՝ պաշտպանում էր վ-ն: իսկ ու իբրև կրավորականի նշան՝ համարյա դուրս էր ընկել ասպարեզից: Ասպարեզի վրա վեճի առարկա մնում էր վ-ի և ւ-ի խնդիրը: Մանդինյանը բանակովի ընթացքում գրում էր մի հոդվածում՝ «Հաղթանական վե՛վը, թե փոքրահասակ հյո՞մը (լունը)»: Վերջնական հաղթանակը տարավ՝ «Հաղթանական վե՛ն, որը հետագայում՝ պաշտպանեցին թե՛ Ս. Մալխայանը և թե՛ Մ. Արելյանը»:

1910 թվականին լույս տեսավ «Մի էջ հայկական ուսուցման պատմությունից» ժողովածուն Ս. Մանդինյանի խմբագրությամբ:

Մանդինյանը խիստ պայքար էր մղում, որ իր «օրգանական» մեթոդը կիրառվի և տարածվի մեր դպրոցներում, մի մեթոդ, որը համառ աշխատանք էր պահանջում ուսուցչից, բայց լինում էր շատ արդյունավետ:

Սեղրակ Մանդինյանը հաճախ խորհուրդ էր տալիս ուսուցիչներին. «Մի՛ լսիր քուրմե-

րին: Ես էլ քուրմերից մեկն եմ, ինձ էլ մի՛ լսիր, այլ սովորիր քննել գիրը և անձնական փորձով ստուգել ուրիշ քարոզները: Ինքը քո հանապարհը բաց արա, ուրիշ ելք չունեսա»:

Հայշա Անառյան. — Իմ ձեմարանական շրջանում էջմիածնում էր ապրում նաև հայտնի հայագետ-գիտնական-լեզվաբան Հրաչյա Աճառյանը: Նա էջմիածնում վարում էր ձեմարանի գրադարանապետի պաշտոնը և օւմաներն լեզվի դասեր էր տալիս Տաճկաստանից եկած աշակերտներին:

Ճեմարանի աշակերտների մեջ խոսում էին, որ Աճառյանը շատ աշխատասեր մարդ է, օրնիրում պարապում է: Ճեմարանը, Ճեմարանի գիտական մթնոլորտը հարկադրում էր մարդկանց պարապել, գրքերի աշխարհում լինել: Ճեմարան եկած շատ դասախոսներ հենց Ճեմարանում էին սկսում իրենց գիտությունը զարգացնել, գիտահետազոտական աշխատանքներով զրադշիլ: Շատերն էլ, որոնք հայերենին լավ չէին տիրապետում, Ճեմարանում դառնում էին հայագետ և սկսում զրադշիլ գիտական աշխատանքներով: Օրինակ, Հակոբ Մանանդյանը, Սիրական Տիգրանյանը և ուրիշները Ճեմարանի մթնոլորտում ածել և զարգանալ սկսեցին և մեր մշակույթի արժանավոր գործիչներ դարձան:

Վարդան Արովյան. — Ճեմարանի ուսուցիչ էր նաև Խաչատուր Արովյանի որդի Վարդան Արովյանը: Նա մի բարձրահամար համարելի մարդ էր, համարելի, բարի գեմք ուներ, մազերն արդեն ճերմակել էին և շատ ծիւելուց բեղերը դեղնել:

Նա մեզ ավանդում էր ուսուց լեզու: 1896—1897 ուսումնական տարում: Դեռ ուսումնական տարին շավարտված, վախճանվեց Վարդան Արովյանը: Աճյունն ամփոփվեց Գայանեի վանքի բակում:

Վարդան Արովյանի երկու արու զավակները սովորում էին Ճեմարանում, ավագը՝ Կոստանդնուպոլիս՝ 6-րդ դասարանումն էր այդ ժամանակ, իսկ կեսոնը՝ կրտսերը 1-ին դասարանում: Կեսոնն իմ դասընկերն էր:

Կեսոնը լավ ընկեր էր, կենսուրախ, կատակասեր: Նա շատ մոտ էր մեր ընկերեներից վաղարշապատցի Սիրոն Ալանյանի հետ. նստում էին միենալուն նստարանին, դասերը միասին սովորում: Կեսոնը ուսուերեն լեզվին լավ էր տիրապետում, ուսուերեն լեզվով ժողովանակ ասում էր ստանում: Մի անգամ այդ ժողովանակի խմբագրությանն ուղարկում է մի նամակ և տակն ստորագրում՝ Իմացիրօվա (=իմացիր, ո՞վ ա): Այդպիսի կատակներ նա հաճախ էր կատարում:

(Շարունակելի)